ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՀՐԱԶԳՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՏԱՐԱԾՔ ՎԱՐՁԱԿԱԼԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Գյումրի համայնքի «Հրաձգության մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Մարզադպրոց) աշխատակիցների աշխատանքային պայմանների բարելավման անհրաժեշտությունից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Տալ համաձայնություն վարձակալելու Գյումրի քաղաքի Հանեսօղլյան փողոց N 2/2 հասցեի, քաղաքացի Հունան Սիմոնի Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 18032015-08-0060) 0,138718 (զրո ամբողջ հարյուր երեսունութ հազար յոթ հարյուր տասնութ միլիոներորդական) հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակությամբ տարածքը՝ 5 (հինգ) տարի ժամկետով:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի վարձավճարի չափ սահմանել՝ տարեկան 1.100.000 (մեկ միլիոն հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ ապահովելու որոշման 2-րդ կետում սահմանված վարձավճարի վճարումները:
4. Սահմանել, որ.
   1) վարձակալած տարածքի օգտագործման պայմաններն ու պահանջները կարգավորվում են վարձակալության պայմանագրով,
   2) Վարձակալած տարածքը նախատեսվում է օգտագործել Մարզադպրոցի աշխատանքային, ինչպես նաև Մարզադպրոց հաճախող սաների ուսումնամարզական գործունեության պայմանների բարելավման նպատակով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվական ի հունվարի 1-ից:

Վ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Հ. ՍՈՒԼԹԱՆՅԱՆ
Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Մ. ՂԱԶԱՐՅԱՆ
Լ. ՋԻԼԱՎՅԱՆ
Ա.ԴԱՎԹՅԱՆ

Կատարող՝ Ա.Ներսիսյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՀՐԱԶԳՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՏԱՐԱԾՔ ՎԱՐՁԱԿԱԼԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Որոշման ընդունումը պայմանավորված է Հրաձգության մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների աշխատանքային պայմանները բարելավելու անհրաժեշտությամբ:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՀՐԱԶԳՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՏԱՐԱԾՔ ՎԱՐՁԱԿԱԼԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Որոշման ընդունմամբ Գյումրի համայնքի 2016 թվականի բյուջեում էական փոփոխություններ՝ ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում: